



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱԶԳ. ՄԵՍՐՈՊԵԱՆ ԵՒ Ա. ԿԻՐԱԿՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՇԿԵՐՏՆԵՐՈՒՆ ԽՕՍԵԼՈՎ՝

ՄԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐՆ ԵՆ ՄԵՐ ԼՈՒՍԱՊԱՅԾԱՌ ԱՊԱԳԱՆ

ՇԵՇՏԵՑ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Մեր մանուկներն են մեր լուսապայծառ ապագան, առանց անոնց, մեր ապագան մութ պիտի ըլլար ու անորոշութեան պիտի մատնուէր: Մեր ընտանիքները եւ Հայ Դպրոցը այս գիտակցութեամբ ու այս հեռանկարով է որ պետք է դաստիարակեն եւ հոգ տանին մեր մանուկներուն, գուրգուրան անոնց վրայ, յայտարարեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, Երեքշաբթի, 18 Հոկտեմբերի առաւօտուն, Մոնթեպելլոյի Ազգային Մեսրպեան երկրդ. վարժարանի յարկին տակ համախմբուած աշակերտներուն, դաստիարակներուն եւ ծնողներուն ուղղելով իր խօսքը:

Ինչպէս ծանօթ է, Վեհափառ Հայրապետին հովուապետական այցելութեան գլխաւոր առանցներէն մէկը Հայ Դպրոցն է, ու այդ նպատակով, ան իրերայաջորդ այցելութիւններով՝ մօտէն կը ծանօթանայ մեր Թեմի դպրոցներուն եւ ուղղակի հաղորդակցութիւն կ'ունենայ աշակերտներուն, դաստիարակներուն ու ծնողներուն հետ: Ազգ. Մեսրոպեան վարժարան այցելութիւնը կ'իյնար այս ծիրին մէջ: Հոն էին նաեւ Ազգ. Արի Կիրակոս Միասնեան վարժարանի աշակերտները, իրենց տնօրէնուհիին ու դաստիարակներուն հետ միասին:

Վեհափառ Հայրապետին կ'ընկերանար Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Ներկայ էին միաբան հայրեր եւ ժողովականութեան անդամներ, ինչպէս նաեւ Ս. Խաչ Մայր Տաճարի հոգաբարձութեան ու շրջանի հայկական միաւորներու ներկայացուցիչներ:

Վարժարանի մուտքին, Վեհափառն ու շքախումբը դիմաւորուեցան տնօրէններուն՝ Տիար Սեդո Պոյաճեանի, Տիկին Գոհար Չաիրի եւ աշակերտներու կողմէ, որոնք խմբուած էին բակին մէջ: Նկատի ունենալով, որ 2011 տարին ձօնուած է Հայ Մանուկին, Վեհափառը դիմաւորեցին երկու մանուկներ: Վեհափառ Հայրապետն ու ընկերակիցները այցելեցին վարժարանի կարգ մը բաժինները, ինչ որ առիթ տուաւ աշակերտներու հետ մտերմիկ գրոյցի:

Բակին մեջ, հանդիպումը սկսաւ Տերունական Աղօթքին երգեցողութեամբ, ապա, աշակերտները արտասանեցին ամերիկեան ու հայկական ուխտերը: Ողջոյնի խօսքեր արտասանեցին երկու տնօրէնները, Ս. Խաչ Մայր Տաճարի հոգաբարձութեան ու վարժարանի ծնողաօժանդակ մարմինին ներկայացուցիչները: Երկու աշակերտներ միացան ողջոյնի խօսքերուն, հաւաստելով, որ կեանքի արժէքներ են հաւատքը, մշակոյթն ու կամքը, առաջինը կը մարմնաւորուի եկեղեցիով, երկրորդը՝ դպրոցով, իսկ երրորդը՝ ժողովուրդի հաւատարմութեամբ: Անոնք նաեւ շնորհակալութիւն յայտնեցին Վեհափառին, որ 2011ը հռչակած է Հայ Մանուկի Տարի:

Մեսրոպեանի ու Արի Կիրակոս Մինասեանի աշակերտները պատրաստած էին հանդես մը. անոնք գեղեցիկ երգեր ու արտասանութիւններ հրամցուցին Վեհափառ Հայրապետին: Մասնակից էին նաեւ մանկապարտէզի ու մանկամտօրի մանուկները:

Վարժարանին տնօրէնը Առաջնորդ Սրբազանը հրաւիրելով՝ հաստատեց, թէ այս վարժարանին աշակերտութեան համար հաւատքը, մշակոյթն ու կամքը կարեւոր արժէքներ են ու կեանքի հիմնաքարեր: Ան նաեւ դրուատիքով խօսեցաւ Վեհափառ Հայրապետին մասին, յիշեցնելով, որ երբ ան 28 տարեկանին, պատրերագմական պայմաններու մէջ ստանձնեց Լիբանանի Թեմին Առաջնորդի պաշտօնը, մեծ գործ կատարեց դպրոցներու վերականգնումին համար: Ան գոհունակութիւն յայտնեց, թէ ինք եւս գործակից եղած է Վեհափառն՝ այդ օրերու աշխատանքին մէջ:

ՎԵՅԱՓԱՌԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Աշակերտներուն ու ներկաներուն պատգամ մը ուղղելով, Վեհափառ Հայրապետը առաջին հերթին յայտնեց, թէ ինք ու եկեղեցւոյ ծառայողները հոգեւոր հայրեր են ժողովուրդին համար, ապա վեր առաւ մեր ապագային տիրութեան մէջ այսօրուան մանուկներուն դերը: Ան անդրադարձաւ հայ եկեղեցւոյ ու դպրոցին անմասնատելի լծակցութեան ու կենսական դերին՝ մեր ժողովուրդի ու յատկապէս մանուկներու կեանքին մէջ, կրօնական ու հայեցի դաստիարակութիւն ջամբերու իմաստով: «Մեր կեանքը ամենօրեայ պայքար է, ու դպրոցը կը կանգնի յառաջապահի դիրքին վրայ», ընդգծեց Վեհափառ Հայրապետը, յիշեցնելով, որ հայ դպրոցն ու եկեղեցին սփիւռքեան պայմաններու մէջ հայրենիք ստեղծեցին մեր ժողովուրդին համար, որ ոտքին տակ չունէր հայրենի հող:

Վերջապէս, Վեհափառ Հայրապետը գնահատանքի խօսք ուղղեց բոլոր այն ծնողներուն, որոնք իրենց զաւակները կը վստահին հայ դպրոցի դաստիարակիչ ու հայակերտ խնամքին:

Տնօրէնն ու Վեհափառ Հայրապետը յուշանուէրներ փոխանակեցին: Հանդիպումը վերջ գտաւ »Կիլիկիա«ի երգեցողութեամբ ու Վեհափառ Հայրապետին Պահպանիչով: Այնուհետեւ, տնօրէնութիւնը պատշաճ հիւրասիրութիւն մը կատարեց Նորին Ս. Օծութեան, շքախումբի անդամներուն ու հիւրերուն:

HIS HOLINESS CATHOLICOS ARAM I VISITS MESROBIAN SCHOOL

On Tuesday, October 18, 2011, His Holiness visited Mesrobian School in Montebello where the Principals, teachers, and students of both Mesrobian and Ari Guiragos Minassian School of Orange County had gathered to welcome him. Also participating in the visit were Clergy and Councils members, Holy Cross Cathedral Board of Trustees, and representatives of local sister organizations.

Upon his arrival, His Holiness, who was accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, was greeted by Mesrobian School Principal Mr. Seto Boyajian, AG Minassian School Principal Mrs. Kohar Zaher, and students who had gathered in the courtyard.

The program took place in the courtyard, and began with the singing of the Lord's Prayer. Welcoming remarks were delivered by both Principals, and representatives from Holy Cross Cathedral Board of Trustees and Mesrobian School Parent Support Committee. Two students also spoke, thanking His Holiness for dedicating this year to the Armenian Child.

A cultural program of songs and recitation by students from both schools followed.

In his message, His Holiness spoke of the role of today's children in our future and the irreplaceable role of the Armenian Church and School in the lives of all our people but especially the youth with regards to religious and national instruction. Our lives are a daily struggle, said His Holiness, and our schools are at the forefront, noting that it is our church and schools that built the Armenian community in the Diaspora for the benefit of our people. In conclusion, His Holiness commended all the parents who have entrusted their children to the care of the Armenian School.

An exchange of mementos between His Holiness and the Principal followed, and the program came to a close with the benediction and the singing of the Cilician anthem. The administration then hosted His Holiness to a reception.

During the visit, His Holiness also visited classrooms and had an opportunity to address the students.